Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/12510/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04 ապրիլի 2023 թվականի ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով հայցվոր «ՅՈՒ. Հարությունյան և Որդիներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

«ՅՈՒ. Հարությունյան և Որդիներ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի հայտը բավարար գնահատելու և նրան գնման ընթացակարգի հաղթող /ընտրված/ ճանաչելու մասով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով դատավորի աշխատակազմին է հանձնվել 30.03.2023 թվականին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Տ

«ՅՈՒ. Հարությունյան և Որդիներ» ՍՊ ընկերության ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի հայտը բավարար գնահատելու և նրան գնման ընթացակարգի հաղթող /ընտրված/ ճանաչելու մասով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացմանը պես և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ**